10.56737/2953-7843-2023.10-145

ԼԻԼԻԹ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
ՄՄ

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՄՄ

ԶԱՐԴԱՆԱԽՇԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՔԱՐՎԵՍՏՈՒՄ[1]

*Զարդանախշը (*ornament*)[2] հայկական զարդարվեստի գլխավոր տարրերից է եւ կիրառվում է գրքային գեղանկարչության, քանդակի, ճարտարապետության բնագավառներում, գեղազարդային (*decorative*) կիրառական արվեստի տեսակներում՝ խեցեգործության, գորգագործության, ոսկերչության, արծաթագործության, տարազի, հագուստի ձեւավորման մեջ։ Զարդանախշը ծառայում է առարկաների գեղարվեստական զարդարման, կենցաղային իրերի, կառույցների, տների ներքին (*interior*) եւ արտաքին (*exterior*) հարդարման միջոցով մարդու գեղագիտական խնդիրների լուծմանը։*

*Հայ ժողովուրդը, լինելով աշխարհում հնագույններից մեկը, դարերի ընթացքում կերտել, զարգացրել եւ հարստացրել է իր ազգային մշակույթը, որտեղ առանձնահատուկ դեր ու նշանակություն ունի զարդարվեստը[3]։ Վերջինս հայկական ժողովրդական արվեստի ամենահին ու «ամենակենսունակ»[4] բնագավառներից մեկն է, որի հազարավոր տարրերը (*motif*), վաղանջագույն ժամանակներից սկսած, զարդարել են պատմական, կրոնական զանազան հուշարձանները, ճարտարապետական կոթողները, եկեղեցիները, դամբարաններն ու գերեզմանաքարերը, խաչ-*

---

1 Ստացվել է՝ 13.09.2023, գրախոսվել է՝ 29.09.2023։ էլ. հասցե՝* lilam77@yandex.ru։

[2] Օրնամենտ – *լատիներեն՝* ornamentum – *զարդարանք, զարդ, դրվագանախշ, որը բնորոշվում է կառուցվածքային տարրերի համաչափ դասավորությամբ, կրկնությամբ (տես* 300 слов по изобразительному искусству, Ереван, *1978, էջ 49)։*

[3] Ա. Մնացականյան, *Հայկական զարդարվեստ, Երեւան, 1955, էջ* VII։

[4] *Նույն տեղում։*

քարերը, ձեռագիր մատյանները, կենցաղային իրերը, հագուստները, եկեղեցական կահ-կարասին, սպասքն ու արարողակարգի զգեստները, սրբազան իրերն ու մասնատուփերը եւ այլն։

Հայկական մանրանկարչական արվեստը, լինելով կարեւոր սկզբնաղբյուր զարդարվեստի զարգացման եւ պատմության ուսումնասիրման համար, բնութագրվում է զարդային տարրերի ու ձեւերի հարստությամբ ու բազմազանությամբ։ Զարդանախշը մարմնավորում է հայ ժողովրդի՝ տվյալ ժամանակաշրջանի ազգային մտածելակերպը, աշխարհի զգայական ընկալումն ու պատկերումը՝ գեղարվեստական ձեւերի բազմիմաստ խորհրդաբանությամբ։

Հայկական ձեռագրերի մեծ մասը կազմող Ավետարաններն ու Աստվածաշունչ մատյանները զարդարվել են Սուրբ Գրքի բովանդակությանը համապատասխանող մանրանկարների պատկերաշարերով, լուսանցապատկերներով, խորանազարդերով, գլխազարդերով, բաժանազարդերով[5], որոնցում կիրառվել են «հորինվածքն ավելի արտահայտիչ դարձնելու գեղարվեստական ամենահարուստ ու շքեղ հնարքները՝ զարդային մոտիվները»[6], հին եւ նոր, պարզ եւ բարդ զարդանախշերը՝ իրենց փիլիսոփայական, աստվածաբանական խորհրդաբանությամբ։ Հայկական ազգային զարդանախշերն արտացոլում են ժամանակի հայ մարդու պատկերացումները, աշխարհըմբռնումը, հոգեւոր ներաշխարհը եւ նրան հուզող հարցերը։

«Զարդանախշը գեղարվեստական, մշակութային ու հոգեբանազգայական յուրահատուկ նշանակություն ունեցող տարր է հայկական ազգային արվեստում՝ մասնավորապես մատենական գեղանկարչության արվեստում եւ դրա հորինվածքային կառույցներում»[7]։ Զարդանախշի՝ «օրնամենտի ամբողջական պատկերը ամենից առաջ արտահայտում է որոշ աշխարհազգացում, կյանքի նկատմամբ մարդկային վերաբերմունք»[8], արտացոլում է «ժողովրդի «հոգին» ու նրա երազանքները գեղեցկության ու երջանկության

---

[5] *Բաժանազարդերը հայկական մանրանկարչությանը բնորոշ զարդապատկերներ են, որոնք տեղակայվում են ձեռագիր գրքի բնագրային էջի լուսանցքում, տառ-թվանշանի շուրջը եւ ցույց են տալիս համապատասխան գլուխները կամ պարբերությունները (տես* Լ. ԴՈՒԴՆՈՎՈ, *Հայկական մանրանկարչություն, Երեւան, 1969, էջ 14)։*

[6] Լ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ, *Հայկական մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացում հորինվածք (*composition*) ստեղծելու արդյունավետ եղանակներ, Էջմիածին, 2021, Թ., էջ 116։*

[7] *Նույն տեղում, էջ 116–117։*

[8] Վ. ԿՈԺԻՆՈՎ, *Արվեստի տեսակները, Երեւան, 1962, էջ 58։*

մասին»[9]։ Զարդանախշը կառուցվում է մեկ ընդհանուր մանրանկարչական հորինվածքում պարբերաբար կրկնվող երկրաչափական տարրերի, բնական ձեւերի (բուսական, կենդանական) եւ տարրերի, ինչպես նաեւ մարդկային կերպարների ձեւաստեղծմամբ, միասնությամբ, համաչափությամբ, որտեղ հորինվածքի հիմքը հանդիսացող զարդաձեւերն արտահայտում են որոշակի փիլիսոփայական, գեղագիտական իմաստ եւ վերացական նշանների (խորհրդանիշների) տեսքով առնչվում են բնագրային էջի համապատասխան գրվածքի գաղափարական բովանդակությանը։

Հայկական ձեռագրարվեստում հայ մանրանկարիչները հասել են անասելի բարձունքների՝ վերարտադրելով մեկ, երկու եւ ավելի զարդային բաղադրատարրերից կազմված լուսանցազարդեր, պարզ եւ բարդ հորիվածքային լուծումներով գլխազարդեր, խորաններ, կիսախորաններ, զարդանախշերով եզրագծված մանրանկարներ, ավետարանիչների դիմանկարներ, Ավետարանների անվանաթերթեր։ Մանրանկարիչների եւ ծաղկողների վրձնած շքեղ պատկերներն ու զարդային կերպավորումները, արտացոլելով տվյալ մանրանկարչական դպրոցին բնորոշ գծերը, նկարչի ճաշակն ու գեղագիտական մոտեցումները, արտահայտում են գրքազարդման համակարգի ամուր կապը Սուրբ Գրքերի եւ հոգեւոր կյանքի հետ[10]։ Աստվածաշնչյան նյութը խորապես ներգործել, ազդել է հայ մանրանկարիչ վարպետների երեւակայության, գեղարվեստական մտածողության ու աշխարհի հոգեւոր ըմբռնման վրա։

«Նկարիչների մեծ մասին, ըստ երեւույթին, առանձնապես հրապուրում էր զարդարվեստի բնագավառը»[11]։ Հայ մանրանկարչի վերացական ու «զարդարվեստային մտածողությունը»[12] շատ լայն եւ ընդգրկուն էր, նա երբեք չէր կորցնում պարզության, հավասարակշռության, համաչափության զգացումը զարդարվեստային բազմազան նմուշներ ստեղծելիս[13]։ Հայկական ժողովրդական զարդարվեստը բնութագրվում է «կենսասիրությամբ, տոկունությամբ, գեղեցկությամբ»[14], այն ունի «ոչ միայն գեղարվեստական, այլեւ դաստիարակչական նշանակություն»[15]։

---

[9] Նույն տեղում։
[10] Լ. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ, նշ. աշխ., էջ 120։
[11] Լ. ԴՈՒԴՈՆՈՎՈ, նշ. աշխ., էջ 11։
[12] Նույն տեղում։
[13] Նույն տեղում։
[14] Լ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Կերպարվեստ եւ գեղարվեստական աշխատանք, Երեւան, 2007, էջ 24։
[15] Նույն տեղում։

Մանրանկարիչների նպատակն էր իրական, բնական ձեւերի ոճավորմամբ[16]՝ պարզեցմամբ, նախշերի համաչափ դասավորությամբ ու խորհրդաբանությամբ զարդարել, համադրել ու ամբողջացնել պատկերի հորինվածքային կառուցվածքն ու Աստվածաշնչի բնագրի տվյալ դրվագի բովանդակային իմաստը։

Մանրանկարիչը հաճախ բուսական ձեւեր՝ մոտիվներ պատկերելիս, «ըստ իր զարդանկարի ոճական մտահղացման»[17], այնքան էր պարզեցնում, ոճավորում կամ փոփոխում բույսի ձեւը, որ ելակետային տարրը ճանաչելն անհնարին էր դառնում[18]։ Ինչ վերաբերում է մարդկային, կենդանական եւ թռչնային կերպարներին, ապա դրանք, թեեւ ոճավորվում էին, սակայն չէին ձեւափոխվում այն աստիճանի, որ անճանաչելի դառնային։ Զարդանկարչական պատկերներում, բացի աստվածաշնչյան եւ խորհրդաբանական նյութից, հանդիպում են նաեւ կենցաղային տեսարաններ՝ որսորդական, ռազմական, թատերական, կրկեսային դրվագներ, գործիքներ եւ կենցաղում գործածվող այլ առարկաներ։

Միջնադարյան հայկական զարդանկարչության մասին մենք պատկերացում ենք կազմում՝ Ժ.–ԺԱ. դարերից մեզ հասած ձեռագրային նմուշների հիման վրա, քանի որ գրիչներն ու ծաղկողներն ընդօրինակում էին ոչ միայն բնագրային էջերը, այլեւ մատյանների մանրանկարներն ու զարդապատկերները։ Կարելի է ասել, որ մանրանկարի ստեղծման համար հիմք էին հանդիսանում նախորդ կամ տվյալ ժամանակաշրջանի մանրանկարչական դպրոցների պատկերագրական տեսակներն ու կառուցվածքները, որոնք զարգացվում էին կրկնօրինակման եւ ստեղծագործական վերարտադրման եղանակով։ Մեկ պատկերագրական տարրի կրկնօրինակումը, վերարտադրումն ու հղկումը ժամանակագրական առումով իրար հաջորդած մանրանկարիչների կողմից հաճախ պատկերագրման կանոնական սկզբունքի հիմք էին հանդիսանում գրքերի ձեւավորման արվեստում։ Հայ ժողովրդի ազգային դիմագիծն ու նրա անցած ճանապարհը

---

[16] *Ոճավորումը բնական ձեւերի փոխակերպումն է պայմանականի, պարզեցվածի, ընդհանրացվածի ու զարդայինի։ Ըմբռնելով կերպարի բովանդակային իմաստը վերացական մտածողությամբ, գեղարվեստորեն ընդհանրացնելով, պարզեցնելով կերպարի բնութագրիչ հատկանիշները եւ անտեսելով երկրորդական գծերը՝ կատարվում են առարկայի զարդանախշային կերպարի ստեղծում, ոճավորում եւ նրա ձեւի ու որոշակի նպատակի ընդգծում (տե՛ս* Լ. Ներսիսյան, *նշ. աշխ., էջ 29)։*

[17] Լ. Դուրնովո, *նշ. աշխ. էջ 11։*

[18] Լ. Դուրնովո, *նշ. աշխ., էջ 12։*

բնութագրող գծերը հղկվում, բյուրեղանում էին դարերի ընթացքում, կատարելագործվում եւ վերածվում զարդային բնական ձեւերի ոճավորման՝ թե՛ գծանկարի կառուցմամբ, թե՛ նրբագեղ գույների համադրումով։

Հայկական զարդարվեստում գերակշռում են բուսական եւ կենդանական բնական ձեւերը։ Դրա պատճառն այն մեծ դերն է, որ մարդու կյանքում խաղացել է բնությունը՝ բուսական ու կենդանական աշխարհը։

*Մանրանկարչական պատկերների ու զարդանախշերի բնական տարրերի՝ մոտիվների ակնհայտ պարզեցումը՝ ոճավորումը, վերացարկումն ու ձեւափոխումը խորհրդանշանի հետեւանք են նաեւ այն հանգամանքի, որ «հայկական ձեռագրական գեղանկարչության արվեստում գերակշռում է խորհրդանշական (*symbolic*), հարթապատկերային (երկչափ տարածական) պատկերման ձեւը»[19]։ Իրական եւ առարկայական աշխարհն արտացոլված է «տեսողական խորհրդանշանների՝ վերացական նշանների (սիմվոլների)»[20] միջոցով։*

Հայկական մանրանկարչական արվեստում՝ մասնավորապես Սուրբ Գրքերի պատկերազարդումներում, զարդային բաղադրատարրերը, նույնիսկ գույներն ունեն ոչ միայն գեղագիտական, այլեւ աստվածաբանական նշանակություն եւ խորհրդաբանություն, որոնց մասին խորհել ու դրանք վերլուծել են հայ անվանի աստվածաբանները, փիլիսոփաները, մանրանկարիչներն ու մանկավարժները։ Մեզ են հասել Գրիգոր Տաթեւացու (ԺԴ.–ԺԵ. դդ.), Ստեփանոս Սյունեցու (Ը. դ.), Հովհաննես Օձնեցու (Ը. դ.), Ներսես Շնորհալու (ԺԲ. դ.) եւ ուրիշների հեղինակած խորանների[21] մեկնությունները, որոնցում ներկայացված են զարդանախշերի ու գույների խորհրդաբանական իմաստները։ Խորանների միջնադարյան աստվածաբանական մեկնություններն ուսումնասիրել է արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանը «Խորանների մեկնություններ» (Երեւան, 1995) եւ «Մեկնութիւնք խորանաց», հետազոտություն եւ բնագրեր (Ս. Էջմիածին, 2004) աշխատություններում։

Խորանազարդերում հանդիպող արծիվը, ձկնկուլը, աքաղաղը, կաքավը, առյուծը, ցուլը, եղնիկը, հուշկապարիկը[22] եւ երեւակայական այլ

---

[19] Լ. Ամիրջանյան, *նշ. աշխ., էջ 115։*

[20] Լ. Ամիրջանյան, *նշ. աշխ., էջ 116։*

[21] *Խորանը զարդանկարային պատկեր (հորինվածք) է՝ Ավետարանների համաբարբառները նշանակող տառ-թվանշաններով (տե՛ս* Լ. Դուրնովո, *նշ. աշխ., էջ 14)։*

[22] *Հուշկապարիկ – Ավերակներում բնակվող առասպելական ոգի (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. երրորդ, Երեւան, 1974, էջ 400)։ Հուշկապարիկը*

*կենդանիներ (հրեշներ) հաճախ զուգամետ (*symmetrical*) դիրքով կենտրոնական տեղ են զբաղեցնում գլխազարդի քառանկյուն հորինվածքում՝ զարդանախշային խաչերի, բուսական տարրերի հետ միասին կազմելով հորինվածքային ներդաշնակ ամբողջություն[23]։*

Մեր բազմադարյան մշակույթի շատ անգին գոհարներ այսօր դարձել են պատմության «լուռ վկաները»։ Որեւէ թանգարանի ցուցափեղկում դրված նկարազարդ Սուրբ Գիրքը, ձեռագիր մատյանը, ծառի ստվերում խոնարհ կանգնած խաչքարը, աշխարհի չորս ծագերում հայ ժողովրդի պես սփռված հայկական մշակույթի թանկարժեք մասունքները վկայում են, թե ովքեր ենք մենք, որտեղից ենք գալիս եւ ուր ենք գնում։ Եւ այսօր մեզ՝ հարուստ ժառանգությունը կրողներիս եւ պահպանողներիս է վստահված այդ լուռ վկայությունը աշխարհին լսելի դարձնելու գործը։

Հոդվածում փորձեցինք վերլուծության ենթարկել զարդարվեստի գլխավոր բաղկացուցիչ տարրի՝ զարդանախշի դերն ու նշանակությունը հայկական մշակութային կոթողների, հուշարձանների՝ մասնավորապես հայ միջնադարյան գրքարվեստի ոլորտներում։ Ներկայացված են զարդանախշի կառուցման ու պատկերման ձեւաստեղծման եղանակներն ու խորհրդաբանությունը միջնադարյան գրքազարդման արվեստում։ Հոդվածում անդրադարձ է արվել զարդաձեւերի արտահայտած առանձնահատուկ գեղագիտական, աստվածաբանական խորհրդաբանությանը, ինչպես նաեւ նրանց գունային նշանակությանը՝ դրսեւորված վերացական նշաններում (խորհրդանիշներում), որոնք կապված են Աստվածաշնչի բնագրային էջի համապատասխան գրվածքի գաղափարական բովանդակության հետ։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մանրանկար, գրիչ, գրչություն, ծաղկող, ձեռագիր, զարդանախշ:

հեթանոսական ժամանակներից հայկական մանրանկարչական արվեստ ներմուծված կանացի դեմքով երեւակայական թռչնի կերպար է։

[23] *Խորանների այս կարեւոր հորինվածքային բաղադրիչների խորհրդաբանության եւ մեկնության մասին տես* Վ. Ղազարյան, *Խորանների մեկնություններ, Երեւան, 1995։*

Արարչագործություն, «Այս են զարդք աշխարհի», Առաջին Ավետարան,
Երեւան (1995—1997 թթ.), գրիչ, նկարիչ եւ ծաղկող Լ. Ամիրջանյան

РЕЗЮМЕ

В статье проанализированы роль и значение главного элемента орнаментального искусства-орнамента в сфере развития армянских культурных памятников, в частности, средневекового армянского книжного искусства. Представлены способы построения и изображения, а также символика орнамента в средневековом книжном искусстве. В статье говорится об особом теологическом, философском, эстетическом смысле и семантики орнаментов, мотивов, а также их цветов, проявленных в абстрактных знаках (символах) и связанных с идейным содержанием соответствующего письма на оригинальных страницах Священных Книг.

SUMMARY

The article analyzes the role and significance of the ornament, main element of ornamental art, in the sphere of development of Armenian cultural monuments, in particular, medieval Armenian book art. The methods of construction and depiction and the symbolism of the ornament in medieval book art are also presented.

The article speaks about the special philosophical, aesthetic meaning and significance of ornaments, motifs, as well as their colors, manifested in abstract signs (symbols), related to the ideological content of the corresponding letter on the original page of the Scriptures.